**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Տանձուտ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/70 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունվարի 5-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/70-1 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի հունվարի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «Ջեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հունվարի 5-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/70-1 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և «Ջեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հունվարի 5-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/70-1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված 1-ին չափաբաժնի մասով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակի «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 280 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Պայմանագրի Հավելված թիվ 2-ի «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը»-ի «Ավարտը» սյունակում՝ 1-ին չափաբաժնի մասով նշված «Աշխատանքաների սկզբից 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 280 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**